

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,

ելնելով յուրաքանչյուր մարդու կրթություն ստանալու իրավունքից եւ այդ իրավունքը ամբողջովին իրականացնելու պետության պատասխանատվությունից,

Նկատի ունենալով Համագործակցության ժողովուրդների միջեւ ավանդաբար ձեւավորված մշակութային կապեր, տնտեսական եւ այլ կապերը, դրանց համապարփակ ամրապնդման եւ ընդլայնման փոխադարձ շահագրգռվածությունը,

համարելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պետական լեզուներով եւ դրանց տարածքում բնակվող ժողովուրդների լեզուներով կրթությունը մշակութային փոխգործակցության եւ համագործակցության կարեւոր պայման,

գիտակցելով մարդասիրության եւ մշակույթների երկխոսության հիման վրա կրթության ազգային համակարգերի զարգացման անհրաժեշտությունը,

հավատարմություն արտահայտելով ազգային փոքրամասնությունների եւ էթնիկ խմբերի մշակութային, լեզվական եւ հոգեկան ինքնատիպության վերածնմանը, պահպանմանը եւ զարգացմանը,

գիտակցելով կրթության, համատեղ ծրագրերի եւ նախագծերի իրականացման բնագավառում մասնակից պետությունների համագործակցության իրականացման մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը,

անկեղծորեն ձգտելով կրթության բնագավառում իրավահավասար համագործակցության, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Մասնակից պետությունները երաշխավորում են իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց կրթության ոլորտում հավասար իրավունքներ եւ կրթության մատչելիությունը անկախ ազգային պատկանելիությունից եւ այլ տարբերություններից:

Մասնակից պետություններից որեւէ մեկի տարածքում մշտապես բնակվող եւ այլ մասնակից պետության քաղաքացիություն ունեցող անձինք կրթություն են ստանում բոլոր մակարդակներում, ինչպես նաեւ այն մասնակից պետության քաղաքացիների համար սահմանված պայմաններով գիտական աստիճաններ եւ կոչումներ, որի տարածքում նրանք բնակվում են:

Մասնակից պետությունները կձգտեն բավարարել քաղաքացիների կրթության, աշխատանքային կադրերի եւ մասնագետների պատրաստման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման փոխադարձ պահանջմունքները՝ երկկողմ հիմունքներով սահմանելով փոխադարձ ֆինանսական հաշվարկները իր քաղաքացիներ չհանդիսացող եւ իր տարածքում մշտական բնակության վայր չունեցող սովորողների, ուսանողների, ասպիրանտների եւ ունկնդիրների կրթության վրա յուրաքանչյուր մասնակից պետության կատարած ծախսերը փոխհատուցելու ժամանակ:

Մասնակից պետությունները պարտավորվում են շարունակել այն մասնակից պետությունների քաղաքացիների ուսուցումը (մինչ դրա ավարտը), որոնք մշտական բնակություն չունեն իրենց ուսուցման մասնակից պետության տարածքում եւ որոնք ուսուցման են անցել մինչեւ 1992 թվականի հունվարի 1-ը՝ տվյալ մասնակից պետության քաղաքացիների նկատմամբ գործող պայմաններով:

ՀՈՂՎԱԾ 2

Մասնակից պետությունները երաշխավորում են կրթության իրենց ազգային համակարգերի մեջ մտնող բոլոր կրթական հաստատությունների իրավահավասարությունը՝ անկախ ուսուցման լեզվից, եւ դրանց պետական օժանդակություն են ցուցաբերում:

ՀՈՂՎԱԾ 3

Մասնակից պետությունները աջակցում են ազգային փոքրամասնություններին եւ

ինքնատիպ էթնիկ խմբերին պատկանող բնակչության կրթական պահանջմունքների բավարարմանը, այդ թվում մայրենի լեզվով կրթություն ստանալու համար պայմանների ստեղծմամբ, ինքնատիպ դասագրքերի եւ այլ ուսումնամանկավարժական գրականության ապահովման եւ մշակման գործում փոխադարձ օգնության ցուցաբերմամբ, ազգային փոքրամասնությունների եւ էթնիկ խմբերի համար մանկավարժական կադրերի պատրաստմամբ եւ վերապատրաստմամբ:

ՀՈԴՎԱԾ 4

Մասնակից պետությունների գիտամանկավարժական կադրերի ատեստավորման պետական մարմինները կարող են անցկացնել այլ պետությունների քաղաքացիների ատեստավորում:

ՀՈԴՎԱԾ 5

Մասնակից պետությունները երաշխավորում են իրենց տարածքներում սույն Համաձայնագրի կնքման պահին մասնակից պետություններում տրված միջին, մասնագիտատեխնիկական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության, կադրերի վերապատրաստման, գիտական աստիճանների եւ գիտական կոչումների շնորհման մասին պետական նմուշի փաստաթղթերի անժամկետ ճանաչումը:

Կրթության, գիտական աստիճանների եւ գիտական կոչումների մասին փաստաթղթերի ճանաչման հարցերը, հետագայում, մասնակից կողմերը կլուծեն փոխադարձ պայմանավորվածությամբ:

ՀՈԴՎԱԾ 6

Մասնակից պետությունները պայմաններ են ապահովում այն կրթական հաստատությունների համար մանկավարժական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման համար, որտեղ դասավանդումը տարվում է ոչ պետական լեզուներով: Փոխադարձ պայմանավորվածության հիման վրա, մասնակից պետություններից յուրաքանչյուրը օժանդակություն է ցուցաբերում այլ մասնակից պետությունների կրթական հաստատությունների համար մանկավարժական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման գործում:

ՀՈԴՎԱԾ 7

Մասնակից պետությունները աջակցություն են ցուցաբերում համատեղ գիտական հետազոտությունների անցկացմանը, կրթության զարգացման հարցերով տեղեկատվության եւ փաստաթղթերի փոխանակմանը, միացյալ տեղեկատվական ծառայությունների, սովյալների ցանցի եւ տպագիր հրատարակությունների ստեղծմանը:

ՀՈԴՎԱԾ 8

Մասնակից պետությունները համապարփակ կերպով կօժանդակեն մասնակից պետությունների տարածքների եւ կրթական հաստատությունների միջև կրթության բնագավառում ուղղակի գործընկերային կապերի պահպանմանը եւ զարգացմանը, ներառյալ սովորողների, ուսանողների եւ մանկավարժների զբոսաշրջային-էքսկուրսիոն գործունեությունը, համատեղ աշխատանքի եւ հանգստի կազմակերպումը, փառատոների, ստեղծագործական մրցույթների, առարկայական օլիմպիադաների, մարզական մրցումների, փոխադարձ պայմանավորվածությամբ սովորողների, ուսանողների, ասպիրանտների եւ փորձնակների փոխանակման կազմակերպումը:

ՀՈԴՎԱԾ 9

Մասնակից պետությունները կրթության միջոցներով կմասնակցեն մասնակից պետությունների տարածքներում էկոլոգիական աղետների եւ տարերային աղետների հետեւանքների վերացմանը:

ՀՈԴՎԱԾ 10

Մասնակից պետությունները կօժանդակեն մասնակից պետություններում կրթության նյութատեխնիկական հիմքի, ուսումնական սարքավորումների արտադրության եւ փոխադարձ մատակարարման, ուսումնական եւ ուսումնամեթոդական գրականության թողարկման զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 11

Մասնակից պետությունները կզարգացնեն կրթության բնագավառում տարբեր մակարդակի պետական կառավարման մարմինների միջեւ շփումները՝ համաձայնեցված կրթական քաղաքականության իրականացման նպատակով:

Սույն Համաձայնագրի իրականացման, կրթության բնագավառում միջպետական փոխգործակցության այլ հարցերը քննարկելու նպատակով, մասնակից պետությունները նպատակահարմար են համարում կրթության ղեկավար մարմինների ղեկավարների խորհրդակցությունների կանոնավոր անցկացումը:

ՀՈԴՎԱԾ 12

Մասնակից պետությունները պարտավորվում են կանոնավոր կերպով տեղեկություն փոխանակել սույն Համաձայնագրին համապատասխան ընդունված կոնկրետ միջոցառումների մասին:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է 5 տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածներով:

Յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դրա մասին առնվազն 6 ամիս առաջ գրավոր ծանուցելով ավանդապահին եւ սույն Համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունների կարգավորումից հետո:

Համաձայնագիրը բաց է այլ պետությունների կողմից միանալու համար: Միացման կարգը սահմանվում է առանձին:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: